№ 140 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5 **1892** ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5 № 140

ՔԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրւում են միխայլ խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով.

Յայտարարութիւների համար վճարւում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՅ 1893 ԹԻԱԿԱՆԻՆ

21-ՐԴ ՏԱՐԻ

„ՄՇԱԿ“

21-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակւի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ և տասն ամսւանը՝ 9 ր., ինն և ութ ամսւանը՝ 8 ր., եօթ ամսւանը՝ 7 ր., վեց ամսւանը՝ 6 ր., հինգ ամսւանը՝ 5 ր., չորս ամսւանը՝ 4 ր., երեք ամսւանը՝ 3 ր., երկու ամսւանը՝ 2 ր., մի ամսւանը՝ 1 րուբլի:

Գրւել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաթօնակայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամչեվի տանը)· կայարաթեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրւելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK». Յայտարարութիւններ ընդունւում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բաւին վճարւում է 2 կոպէկ. «Մշակի» առաջին երեսի վրա յայտարարութիւններ չեն տպագրւում, այլ տպագրւում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարւում: Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 րուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 րուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Երկուշաբթի, դեկտեմբերի 7-ին, հայ դերասանական մշտական խումբը կը ներկայացնէ

մանակցութեամբ պ. ՄԻՐԱՂԵԱՆԻ

Ի ՆՊԱՍՏ Պ. ԱՐԱՓՍԵԱՆԻ

I

ՊԷՊՕ

կոմեդիա 3 գործող. հեղինակ. Գ. Սունդուկեանցի.

Գործող անձինք. տ.տ. Մելիքեան, Փալանձեան, օր. Վարդուհի. պ.պ. Պետրոսեան, Աբրահամեան, Արաքսեան, Միրզաեան, Պարոն-Սարգսեան, Հասան-Ջալալեան և այլք:

II

Նկարիչ պ. Բաշինջաղեան ի ցոյց կը դնի կենդանի պատկեր ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐ.

Սկիզբն է ժամի 7½ երեկոյեան: Տիղերի գները սովորական են: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս օգնենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Ախալքալաքից. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլգարական սահմանադրութեան վերաքննութիւնը. Ընտրութիւններ Ամերիկայում. Սրտանձախանց եպիսկոպոսի գոյքը. Տեղեկութիւններ Թիւրքայ Հայաստանից. Պապի նոր շրջաբերականը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատասխան «Արձագանքին»:

ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵՆՔ

—

Օր չէ անցնում որ մեր խմբագրատունն չը դայլին հայ աղքատներ, օգնութիւն խնդրելու համար: Ահա մի հիւանդ տղամարդ է գալիս, որը բեռնաւորված է ընտանիքով, ահա ներկայանում է մի ջահիլ այրի, իր փոքրիկ որբերով, որը յայտնում է թէ ուտելու հաց չունի....

Ո՞ւմ պարտաւորութիւնն է օգնել այդ տեսակներին. կամ քաղաքիս բարեգործական ընկերութիւնների, կամ այն եկեղեցական համայնքի, որին պատկանում է չքաւոր ընտանիքը: Մեր բարեգործական ընկերութիւնը մասամբ չենք էլ կարող մեղադրել, որովհետեւ թէ ինքն ընկերութիւնը և թէ խորհրդի մի քանի անդամներ՝ օգնում են որքան կարող են: Բայց չենք կարող չը խոստովանվել, որ Թիֆլիսի պէս մի հայաբնակ քաղաքին ամօթ է տալ իր միակ, կենարօնական բարեգործական ընկերութեանը ընդամենը մի 200 անդամ, այն ինչ Թիֆլիսեցիք շատ հեշտութեամբ կարող էին 1000 անդամ տալ նոյն ընկերութեանը: Իսկապէս ամէն մի վոզաւոր, ամէն մի ինտելիգենտ հայ, նիւթապէս փոքր ի շատէ ապահոված Թիֆլիսեցի իւրաքանչիւր հայ բնակիչ՝ պէտք է անդամ գրվէր մեր բարեգործական ընկերութեան: Այն ժամանակ ընկերութիւնը, նիւթական միջոցներ ունենալով, կարող էր և գործ կատարել: Մասամբ էլ ինքն ընկերութիւնը մեղաւոր է, որ տասն տարի գոյութիւն ունենալուց յետոյ, իր գործունէութեամբ չհմացաւ բաւականաչափ գրաւել քաղաքիս հայ ազգաբնակութեան համակրութիւնը: Սակայն, ուրիշ կողմից, չենք կարող չը խոստովանվել, որ Թիֆլիսի պէս մի մեծ քաղաքին շատ էլ պատիւ չէ բերում, որ կովկասեան մայրաքաղաքի հայոց բարեգործական կենարօնական ընկերութեան տարեկան բիւդժէտը՝ չորս հազար րուբլուց չէ անցնում, այն ինչ նոյն ընկերութեան բաթմումի ճիւղի տարեկան նախահաշիւը մօտաւորապէս նոյնքան է, և արդէն 3500 րուբլի դումարի է հասնում....

Շվէյցարական քաղաքներում ամէն մի ինտելիգենտ բնակիչ իր պարտաւորութիւնն է համարում անպատճառ անդամ գրվել մի որ և է բարեգործական ընկերութեան: Դրանով նա ազատվում է աղքատներին, չքաւորներին, մուրացկաններին ողորմութիւն տալու պարտաւորութիւնից: Նա գրել է տալիս իր բնակարանի դրան վրա, իր ազգանուան տակ՝ „անդամ այս ինչ բարեգործական ընկերութեան“ և դրանով ազատվում է ամէն մի խնդրողին ողորմութիւն տալու պարտաւորութիւնից:

Բայց բացի բարեգործական ընկերութիւններից, Շվէյցարիայի իւրաքանչիւր համայնքը պարտաւոր է հոգալ իր չքաւոր անդամների մասին: Այդ է պատճառը, որ Շվէյցարիայում մուրացկանութիւն չը կայ և մուրացկանութիւն անելն էլ այնտեղ արգելված է:

Պարզ է որ համայնքների փոխարէն մեզ մօտ եկեղեցական իւրաքանչիւր ծուխ կարող էր նոյն պարտաւորութիւնը յանձն առնել: Հարկաւոր է, որ իւրաքանչիւր եկեղեցու ծուխը՝ աղքատների դրամարկղ ունենար: փողը կարող էր գոյանալ կամ ազատ նուիրատուութիւններից, գանձանակի միջոցով հաւաքվող դրամներից, ծխական քահանային կամ եկեղեցու երեցփոխին յանձնված ստորագրութեան թերթի միջոցով, կամ վերջապէս մի որոշ տարեկան տուրք նշանակելով իւրաքանչիւր ունեւոր ծխականի վրա, նոյն ծուխի աղքատներին ծուխի ընդհանուր հաշուով պահելու համար: Այն ժամանակ վերջ կը դրվէր իւրաքանչիւր ծուխի մէջ մուրացկանութեանը և աղքատ ընտանիքների անօգնական դրութեանը:

Այդ տեսակ անհրաժեշտ կարգադրութեան մասին չը մտածեցին մեր թեմական առաջնորդներից ոչ մէկը: Այժմ այդ օգտաւէտ, այդ անհրաժեշտ գործի իրագործումը մեզ է մնում սպասելու մեր ապագայ կաթողիկոսից, քանի որ մինչեւ այժմ մեր հոգեւորականութիւնը անընդունակ հանդիսացաւ այդ տեսակ գործ գլուխ բերելու մեր երկրի բոլոր հայաբնակ քաղաքներում, աւաններում և գիւղերում: եկեղեցիներում պատարագի ժամանակ փող են հաւաքում յօգուտ քահանաների գանձանակի, բայց ոչ ոքի գլուխը չէ գալիս դրամ ժողովել յօգուտ ծուխի աղքատների դրամարկղի...

Բայց որպէս վի այդ տեսակ գործ գլուխ գայ, հարկաւոր է, որ մեր քահանաները և մեր երեցփոխները պարտաճանաչ մարդիկ լինէին, հարկաւոր է որ եկեղեցական հաշուառութիւնները անփոյթ մարդիկ չը լինէին: իսկ եթէ մեր երեցփոխները միշտ կընտրվէն խնամութեամբ, եթէ նրանք կը շարունակեն լինել փող ուտող ու ծուխին երբէք հաշիւ չը ներկայացնող անձինք,—այն ժամանակ, ի հարկէ, ապարդիւն էլ կը լինի մտածել անգամ այդ տեսակ օգտաւէտ, այդ տեսակ մարդասիրական գործի իրագործման մասին՝ ինչպէս է ծխական դրամարկղը ծուխի աղքատների համար:

Մեզ մօտ ամէն բան այսպէս է. քարոզած սկզբունքները կարող են և շատ լաւ ու օգտաւէտ լինել, բայց նոյն օգտաւէտ սկզբունքները կատարող, իրագործող չը կայ, որովհետեւ իրանք մարդիկ անպիտան են:

„Ինքն երգը գեղեցիկ է, բայց երգիչն անպիտան է“ ասում է ժողովրդական առածը:

Այդպէս է մեզ մօտ և ամէն բան՝ և բարեգործութիւնը, և մամուլը, և դպրոցը, և եկեղեցին, և թատրօնը, և հասարակութիւնը, և համայնքը և այլ և այլ ընկերութիւնները...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Նոյեմբերի 27-ին

Ամսիս 8-ին կայացաւ Կովկասեան «Հայոց բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղի ընդհանուր ժողովը՝ որը հաստատեց վարչութեան ներկայացրած նախահաշիւը 92/93 թվի համար: Նախահաշուի համեմատ մուտք սպասվում է. 30 անդամներից անդամավճար՝ 150 րուբլի, վիճակախաղից՝ 50 ր., թատրօնական երկու ներկայացումներից՝ 60 ր., մասնաւոր նուէրներ՝ 50 ր. ընդամենը՝ 310 րուբլի: Այդ գումարը ծախսելու է հետեւեալ կերպով. քաղաքիս աղքատներին ընդհանրապէս և տեղիս երեք ուսումնարանների չքաւոր աշակերտներին և աշակերտուհիներին օգնելու համար՝ 150 ր., մի ուսանող որդեգրին օժանդակութիւն՝ 60 ր., գաւառիս հայ ժողովրդի մէջ ժողովրդական էժանագին գրքեր տարածելու համար՝ 40 ր., դիւանական ծախք 5 րուբլի, մայր գումարին յատկացնելի 5%—15 ր. 50 կոպէկ, իսկ մնացեալ 39 ր. 50 կոպէկը յատկացնել ընկերութեան ճիւղի ունենալի արհեստանոցին:

Նոյեմբերի 22-ին կայացաւ նոյնպիսի մի ժողով, որտեղ տեղի ունեցան ընտրութիւններ: Ընդհանուր ժողովի նախագահ վերընտրվեց Խ. ա. Ք. Բարսղեանց, քարտուղար ընտրվեց պ. Գ. Վանցեանց: Ըստ կանոնադրութեան դուրս գնացող՝ վարչութեան երկու անդամների և մի փոխանդամի փոխարէն վարչութեան անդամներ ընտրվեցան պ.պ. Խ. Մառանկոզեանց և Զ. Տէր-Գրիգորեանց, փոխ-անդամ պ. Գ. Վանցեանց: 91/92 թ. հաշիւները վերաստուգելու համար մանաժողովի անդամներ ընտրվեցան՝ պ.պ. Զ. Արվանեանց, Յակոբ Յարութիւնեանց և Ա. Գրիգորեանց:

Z.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Նոյեմբերի 27-ին

Այս տարի, երբ Գետաչէն գիւղում ևս խօլէրա երևաց, նրա դէմ կռւելու միջոցներ ձեռք առնելու համար ստորագրութեամբ փող ժողովեցինք՝ ես Գետաչէն գիւղի հասարակութիւնից, իսկ Ն. Մելիք-Մնացականեանց այն գանձակեցիներից, որոնք ամառ ժամանակ բնակվում էին Գետաչէն գիւղում: Իմ ձեռքով գետաչէնցի 49 մարդկանցից ժողոված փողի գումարն է 157 րուբլի 40 կոպ. իսկ Ն. Մելիք-Մնացականեանցի ձեռքով գանձակեցիներից ստացած գումարն է 127 րուբլի, ուրեմն ընդամենը եղել է 284 ր. 40 կոպ.:

Այդ գումարը գործադրվել է այսպէս. պարոն բժիշկ Ս. Շահպարոնեանցին մի ամբողջ ընթացքում վճարել ենք 150 րուբլի, ֆելդշեր Դադատիևին—50 րուբլի, դեղավաճառ Բէլագինին—50 րուբ. մի կօնիակի չիշը՝ 1 րուբլի 60 կոպ. ֆելդշեր հրաւիրելու հեռագրին՝ 57 կոպ., բժիշկ Ս. Շահպարոնեանցին Հաջիքանդից առաջին անգամը գիւղը տանելու համար, գանձակեցի մէկի ձեռքով ֆայտոնին վճարել ենք 4 ր. բոլոր ծախսը եղել է 255 ր. 17 կոպ. ծախսը հանած ժողոված գումարից՝ մեզ մօտ մնում է առ ձեռն պատրաստի 29 ր. 23 կոպ.:

Որովհետեւ ամէն տեղից լրագիրների միջոցով յայտնում են այն կարծիքը, թէ հաւանական է, որ խօլէրան կրկնվի առաջիկայ գարնանը, այդ պատճառով այդ գումարը—29 ր. 23 կոպ. պահում եմ մօտս անգործադրելի մինչեւ այդ ժամանակը: եթէ բաղդը պղտղի, որ Գետաչէն գիւղում չը կրկնվի խօլէրան, այն ժամանակ 29 ր. 23 կ. կը գործադրվի եկեղեցու կամ տեղական ծխական դպրոցի օգտին, իսկ եթէ կը կրկնվի խօլէրան՝ այն ժամանակ կը գործադրվի գիւղի համար, դեղօրայք ձեռք բերելու նպատակին:

Խնդրեմ, յարգելի խմբագիր, այս համառօտ հաշիւը տպագրէք ձեր պատուական թերթի էջերում ի գիտութիւն այն անձանց, որոնք չատ են հետաքրքրվում իմանալու խօլէրայի դէմ կռւելու առիթով ժողոված գումարի գործադրութեան մասին:

Մ. Եպիսկոպոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պարսկաստանի Սալմաստ գաւառից մեզ գրում են հետեւեալը. «Խօլէրան Սալմաստում դադարեց հոկտեմբերի սկիզբներում: Թէ որքան հիւանդացող և քանի % առողջացող եղաւ՝ անհնարին է ասել, իսկ մեռնողների թիւը 600 հոգի է: Պարսկաստանում եղողներին կամ նրա հետ ծանօթներին յայտնի է թէ ինչպէս դժուարութիւնների և արգելքների է հանդիպում մի որ և է ճիշդ և հաստատ տեղեկութիւններ ու լուրեր ժողովողը, կամ հաւաքողը, իսկ ուր մնաց վիճակագրութիւնը, որի գոյութիւնը Պարսկաստանին միանգամայն անյայտ է: Ժողովուրդը, մանաւանդ թուրք տարրը, միշտ աչքատում էր ծածկել խօլէրայից հիւանդներին և մեռնողներին: Տղերիս գրողը մեռնողների թիւը հաւաքելիս չատ անգամ ստիպված էր լինում գնալ հանգստարանները և այնտեղ նոր գերեզմանների թւից իմանալ թաղվածների թիւը: Ամբողջ Սալմաստում թուրքերից մեռան 500 հոգի,

ԳՈՒՇԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆՈՒԹԻՒՆ «ԱՐՁԱԳԱՆՔԻՒ»

Tu l'as voulu, Georges Dandin!

—

«Ծիծաղքեր» իր 138-րդ տարեմուտի ճակատի վրայ կ՚ունենայ հետեւեալ (ի) ծանուցագիրը. «Ծանուցանենք մեր բարեկամներուն եւ բաժանորդներուն, որ մեր հրատարակութեան ուշացման պատճառը եղած է մեր տպագրիչին անկանոնութիւնը, որ մեզ ստիպեց ուրիշ տպարան մը փոխադրիլ, որ ամիսներ առաջ մեզ խոստացած էր ամէն կանոնաւորութիւն, բայց ոչ միայն չկատարեց իր խոստումը, այլ եւ մեզ ստիպեց ամիսներ սպասել, որ մեր թերթը լոյս տեսնէ։ Ներողութիւն կը խնդրենք մեր բարեկամներէն եւ բաժանորդներէն, որոնց թերթերը ուշացան, եւ կը յուսանք, որ այսուհետեւ մեր թերթը կանոնաւոր կերպով լոյս պիտի տեսնէ»։

—

Ինչպէս կ՚երեւի, «Ծիծաղ»ի տպագրութիւնը ստանձնած տպարանը ուրիշ տպարանի մը փոխադրուած է, եւ այդ պատճառաւ «Ծիծաղ»ի հրատարակութիւնը ուշացած է։ Ուրախ ենք, որ «Ծիծաղ»ը կրկին կ՚երեւի իր ընթերցողներուն առջեւ, որոնց մեծ մասը անհամբեր կը սպասէր անոր հրատարակութեան վերսկսման։

—

Ա՛ս օրերս Փարիզի ամենահռչակաւոր թատրոններէն մին՝ Պոտվիլ, ներկայացուց նոր կատակերգութիւն մը, որ մեծ հետաքրքրութիւն կը շարժէ։ Ֆրանսական թատրոնի վարիչները, որոնք ամէն տարի կը ստիպուին ներկայացնել նոր կատակերգութիւններ, որպէսզի կարենան ապրիլ, ամէն կերպով կը ջանան գրաւել հանրութեան ուշադրութիւնը։ Ասոնք կ՚ընեն ինչ որ կ՚ուզեն, ինչ որ կը գտնեն յարմար, որպէսզի հանրութիւնը չձանձրանայ։ Ասոնք կ՚ընեն ինչ որ կ՚ուզեն, ինչ որ կը գտնեն յարմար, որպէսզի հանրութիւնը չձանձրանայ։ Ասոնք կ՚ընեն ինչ որ կ՚ուզեն, ինչ որ կը գտնեն յարմար, որպէսզի հանրութիւնը չձանձրանայ։

—

Ֆրանսական թատրոնի վարիչները ամէն տարի կը ստիպուին ներկայացնել նոր կատակերգութիւններ, որպէսզի կարենան ապրիլ, ամէն կերպով կը ջանան գրաւել հանրութեան ուշադրութիւնը

ազգ չենք, որ մի օրվայ մէջ թողնենք մեր հաւատը, որովհետև վաղուց է, որ այդ երկու եկեղեցիները իրարից չատ հեռու են: Ըստ որում այդպիսի սուտ լուրեր են տարածել ամբողջ աշխարհում մեր ազգի նկատմամբ, մենք խնդրում ենք բոլոր ազգերից՝ չը հաւատալ այդ սուտ ու թըշնամական լուրերին: Մենք մեր հարց կրօնի վրա հաստատ ենք: Ով որ հնազանդ է մեզ, թող հաւատայ այդ գրուածքը: Հակակղոպատրիարքական է: Մար-Շիմօն՝ պատրիարք Արեւելքի», և ապա հարիւրաւոր քահանաների և մէլիքների ստորագրութիւններ (օգոստոսի 10-ին):

Ահա եղել վարդապետները մի այդպիսի սոից օգտվեցան և Ամերիկայից անագին գումարներ թափվեցան նրանց համար:

Այն ժողովուրդը, որ մի ժամանակ խաղաղ և հանգիստ կեանք էր վարում—ցանում էր, հնձում ու կալսում էր և իր դառն քրտինքի աշխատանքով ապրում, այսօր թողած այդ բոլորը և աստուածաբանութեան դիպլօմը ձեռքին խաչադրութիւն է անում ու յաճախ էլ Ռուսաստանի խոնաւ բանտերում փտում: Ասօրիներին այդ դրութեան հասցնող միսիօնարներն են, որ այսօր սկսել են մօտենալ հայերին և եթէ սրանց վրա մտածող չը լինի, քանի որ իրանց վրա յոյս չէ կարելի դնել, սրանք հեռու չեն մօտակայ կորստից:

Թէև պէտք է խոստովանված, որ այժմ պարսից կառավարութիւնը հասկացել է այդ միսիօնարների ով և ինչ լինելը, և ամեն կերպ աշխատում է հալածել և երես չը տալ, որովհետև որտեղ որ էլ երևան այդ միսիօնարները, այնտեղ անպատճառ կռիւ, խարդախութիւն և խռովութիւն պէտք է ընկնի ժողովրդի մէջ:

Այս սեպտեմբերին Սարա դիւղի թուրքերը յարձակվեցան կաթօլիկների վրա և անցեալ տարի թէհրան գնացող վարդապետին ջարդեցին: Մի ամիս է, որ Թաւրիզի բողոքականների եկեղեցին ու դպրոցն են փակել:

Այս ամառ Ուրմիում կաթօլիկները ձեռնել էին մի հայ, որ բողոքել էր թէ Թաւրիզ և թէ Թէհրան: Այժմ թէ Թէհրանից և թէ Թաւրիզից հրաման է եկել Ուրմիայի դատաւորին, որ սաստիկ պատժէ յանցաւորներին և հրամայէ, որ այսուհետև ոչ մի հայի հետ գործ չունենան, ապա թէ ոչ պարսից տէրութիւնը ստիպված կը լինի դիմել ամենաստիկ և խիստ միջոցների:

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լրագիրներին Պարիզից հեռագրում են, թէ Բրիսօնի մասին սկսել են խօսել, որպէս հանրապետութեան նախագահի ապագայ կանդիդատի մասին:

—Կ. Պօլսի լրագիրներում կարդում ենք. «Թիւրք լրագիրները կը հրատարակեն թէ վանայ կուսակալութեան վարչական ինչ ինչ խնդիրներու վրա քննութիւն ընելու համար պետական խորհրդի անդամ Աղիզ-բէյ պաշտօն ստացեր է այս օրերս կ. Պօլսէն մեկնիլ: Աղիզ-բէյին պիտի ընկերանայ Պազը-բէյ, որ նոյն խորհրդի անդամ է:»

—«Հայրենիքի» մէջ կարդում ենք. «Թղթակցութիւն մը, զոր վերջերս հրատարակեցինք, կը խօսէր արդէն կարմրի կուսակալութեան մէջ սովի յայտնուելու հաւանականութեան վրա: Այժմ թիւրք լրագիրները կը տեղեկացնեն թէ սովի առաջին նշաններն արդէն յայտնուեր են այն կողմերը: Ցորենի գինը բարձրացեր է, պարագայ մը, որմէ չատ պիտի նեղուին աղքատները: Թիւրք լրագիրները սովի իբր պատճառ ցոյց կուտան այս տարուան չորութիւնը:»

—Ֆրանսիական լրագիրները հաշիւ են արել, որ բելգիացի դրամատէրերը 50 միլիոն ֆրանկի չափ գումար են կորցրել Պանամայի գործի մէջ:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական լրագիրները տպագրել են Ընտանի կատուի ընտիրը: Հետևակաւոր պատմաբանը միայն մի քանի տողերով է արտայայտել իր վերջին կամքը, որպէս ընտանիքի հայր: Ահա այդ կտակի բովանդակութիւնը. «Կտակում եմ Կօրնելիա Շէֆֆերին, իմ կնոջը, իմ ամբողջ գոյքս, ի յիշատակ մեր ջերմ սիրոյ: Ես կատարելապէս համոզված եմ, որ այդ կերպ վարվելով, կատարում եմ միմիայն իմ զաւակների կամքը. քանի կենդանի է նրանց մայրը, ես հաստատապէս համոզված եմ, որ իմ կնոջ և նրա զաւակների մէջ դրամական ոչ մի տարաձայնութիւն տեղի չի ունենայ:» Էրնէստ Ընտան համարեա ոչինչ կարողութիւն չը թողեց: Նրա ժառանգութիւնը բաղկացած է միայն նրա գրքերից և մի անից:

***

Աշխարհիս ամենաերկար հեռեֆօնի գիծը հաստատվեց Ամերիկայում, Նիւ-Եօրկի և Չիկագօի մէջ: Գծի երկարութիւնն է՝ 1530 վերստ: Այժմ Նիւ-Եօրկի բնակիչը նոյնչափ դիւրութեամբ կը կարողանայ խօսել Չիկագօի բնակչի հետ, որչափ իր մի հարևանի հետ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՎԱՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 2 դեկտեմբերի: Այսօր «վաարամ» դահլիճում տեղի ունեցաւ, կնկլերի նախագահութեամբ, հակապանամեան միտինգ, ներկայութեամբ մի քանի պահպանողական պատգամաւորների. սօցիալիստների բազմաթիւ խումբը անկարգութիւններ արեց և կռիւ գցեց. վերջապէս էստրադայի մօտ մի փոքր պայթիւն եղաւ, որից յետոյ ժողովը փակվեց: Անգլին իրարանցումի միջոցին, երբ վերջացաւ սօցիալիստական մի ուրիշ միտինգ Մօնպարնասում, սօցիալիստները փորձեցին միտինգ կազմել փողոցում, վիրաւորեցին սուսերակռիւներին դաշոյններով և մուրճերով, և մի քանի անգամ սարճանակ արձակեցին: Երեք պօլիցիական ծանր վիրաւորված են. վիրաւորված է և պօլիցիական կոմիսարի օգնականը: Ընդհարումը տեղի ունեցաւ Cercle Catholique-ի առաջ, որտեղ կառուցված է ժամանակաւոր հիւանդանոց: Ժանդարմները, վրա հասնելով, ձերբակալեցին չատ սօցիալիստներին. կռիւ ժամանակ վիրաւորված են մինչև 30 հոգի. նրանցից հինգը պօլիցիականներ են:

ՊԱՐԻԶ, 2 դեկտեմբերի: Բէյնախի սենեկապետը խոստովանվեց դատաստանական քննիչին, որ ինքը էր տիրոջ դիակի մօտ գտաւ մի սրուակ թոյնով:

ՊԱՐԻԶ, 2 դեկտեմբերի: Ֆինանսների մինիստր է նշանակված Տիրար:

ՍՕՖԻԱ, 2 դեկտեմբերի: Ստամբուլով մանաւոր ժողովի մէջ պարզաբանեց բուլգարական սահմանադրութեան փոփոխութեան ծրագիրը, որը արդէն յայտնի է: Ներկայ եղող պատգամաւորներից չատերը խոստացան պաշտպանել այդ ծրագիրը:

ԲԵՐԼԻՆ, 2 դեկտեմբերի: Բէյխստագը ուղարկեց 28 հոգուց բաղկացած յանձնաժողովին՝ զինուորական օրինագիծը:

ԴԱՐՄՇՏԱՏ, 2 դեկտեմբերի: Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչ իր ամուսնու հետ չաբաթ օր ուղևորվում է Մոսկվա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 դեկտեմբերի: Երբ ծովային մինիստր Զիխաչով դեկտեմբերի 2-ին նայում էր ծովային նոր շինութիւնները՝ վերևից վայր ընկաւ տախտակի մի կտոր, և վիրաւորեց մինիսարին. թէև մինիսարի ընդհանուր առողջութիւնը դոհացուցիչ է, բայց նրան հարկաւոր է կատարեալ հանգստութիւն:

ՊԱՐԻԶ, 3 դեկտեմբերի: Դինամիտային գործին վերաբերեալ դատաստանական գործումէութները կը հաղորդվին քննիչ յանձնաժողովին: Պանամայի յանձնաժողովը լսեց Բուվիէին, Կլեմանսոյին և Կոնստանին:—Վախճանվեց ակադեմիկ և հրապարակագիր Ջօն Լեմոան:

ՍՕՖԻԱ, 3 դեկտեմբերի: Սահմանադրութեան 38-րդ յօդուածին կաւելացվի, որ բուլգարական իշխանը և նրա ժառանգը պէտք է ուղղափառ կրօնի լինեն, բայց առաջին իշխանը և նրա առաջին ժառանգը կարող են դաւանել իրանց ազգային կրօնը:

ՄՕՍԿՎԱ, 3 դեկտեմբերի: Ցայսնի գինեվաճառ Պեսար Սիրնովի խմիչքների համար ակցիզ վճարեց նոյեմբեր ամսին 1,128,945 ր. 85 կ. և 40 գրադուսանի $2^1/_2$ միլիօն վեդրօ սպիրտ գնեց 11 միլիօնից աւելի ակցիզ վճարելով:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ



ՄԻԱՅՈՑ **ԽԱՐՐՈՒԽԻ ԴԷՄ**

բժշկական դէպարատներից թողլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

ծախվում է 40 կօպէկով

Դեղագոյ ծական Ապրանքների Վաճառման կովկասեան Ընկերութեան մէջ թիֆլիսում:

№ 128 (91 թ.) 1—40

ՁՈՒԻ ՍԱՊՈՆ

ЯИЧНОЕ НУМЕРНОЕ МЫЛО. ГЛИЦЕРИНОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО ВѢСОВОЕ ЯИЧНОЕ МЫЛО.

Ա. ՄՅՈՒՍԵՒԵՑԿ

13—52 (2) № 86

Մի տիկին, վերին կարգի ընտանիքից, որ տասնչորս տարի ապրել է Թիֆլիսում, ցանկանում է վերադառնալ Ռուսաստան, որտեղ ունի մեծ կալուածներ, և ուզում է ամուսնանալ մի ազնիվ, ուսումնասիրված երիտասարդի հետ, որ ունենալով գրավիչ արտաքին, ունենայ նաև բաւական կապիտալ, որպէսզի կարողանայ ձեռնարկել մեծ գործեր: Նամակները խնդրվում է ուղարկել Թիֆլիս, Ն. Ա. Ա. Ա